ՀԱՎԵԼՎԱԾ N 4
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2025 թվականի
փետրվարի 27-ի N 29-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

Քաղաք ՄԱՐԱԼԻԿ 2025 Թ.

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

1. Ենթակառուցվածքներ

Մարալիկ քաղաքի բնակֆոնդի պահպանմանն ուղղված ամենամյա ծրագրի համատեքստում Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասում իրականացվել են 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման շինարարական աշխատանքներ: Աշխատանքներն իրականացվում են համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, որի ընդհանուր արժեքը կազմել է 64 մլն ՀՀ դրամ, աշխատանքներն ավարտական փուլում են:

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայր տանող ճանապարհի մինչև Կարմիր վանքի հատված 1300 գծմ եկարությամբ ճանապարհի ասֆալտապատվել է, սոցիալ-տնտեսական սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, աշխատանքները ավարտական փուլում են:

Անի համայնքի Լանջիկ, Ձիթհանքով և Քարաբերդ բնակավայրերի խմելու ջրի մատակարարումն իրականացվում է Արագած լեռան ստորոտի <<Ձլկաններ կոչվող>> բնական աղբյուրներից, որոնց թողարկային հզորությունը, հատկապես ամռան ժամանակաշրջանում, չէր բավարարում այդ բնակավայրերին բավարար քանակությամբ խմելու ջուր մատակարարելու համար: Մարալիկ քաղաքի օրական կարգավորման 2000 խոր. մետր տարողության ջրամբարի /ՕԿՋ/ հարևանությամբ առկա պոմպակայանի արդիականցման, նոր պոմպերի տեղադրման շնորհիվ <<Ղազանչի>> ջրատարից Մարալիկ մղվող ջրից որոշակի քանակության ջրի մղման արդյունքում բարելավվել է Լանջիկ, Ձիթհանքով և Քարաբերդ բնակավայրերի խմելու ջրի մատակարարումը:

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև «Անի համայնքի Մարալիկ քաղաքի կոյուղագծերի կառուցման աշխատանքներ» ծրագիրը: Մարալիկ քաղաքի Շիրակացի, Կոլտնտեսականների փողոցների, Շիրակացի 1-ին, 2-րդ, Կոլտնտեսականների 3,4,5,6,7-րդ նրբանցքներում անցկացվել են կոյուղագծեր, որոնց ընդհանուր երկարությունը կազմել 4300 գծ. մետր, կառուցվել է կոյուղաջրերի մաքրման կայանք: Ծրագրի արժեքը կազմել է 104 մլն. ՀՀ դրամ:

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում համայնքի տրանսպորտային պարկը համալրվել աղբատար նոր մեքենայով, որի արժեքը կազմում է 32 մլն. 611 հազար ՀՀ դրամ:

2024 թվականին պետական ծրագրի շրջանակներում ասֆալտապատվել են Մարալիկ քաղաքի Հաղթանակի, Արկադի Տեր-Թադևոսյան /նախկինում Ձերժինսկի/, Մադաթյան փողոցի 121 գծ.մ երկարության հատվածը և Ազատության հրապարակը: Սալիկապատվել են նշված փողոցների և հրապարակի հարակից մայթերը, արդիականացվել են փողոցների լուսավորության համակարգերը և կոմունալ ենթակառուցվածքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 279 մլն 800 հազար ՀՀ դրամ: Պետական ծրագրի շրջանակներում մեկնարկել է Ձիթհանքով-Թալին համայնքի Զարինջա միջբնակավայրային 4.3 կմ. երկարության ճանապահի հիմնանորոգման աշխատանքները, որի արժեքը կազմում է 479 մլն ՀՀ դրամ:

Սառնաղբյուր բնակավայրում համայնքի միջոցներով տեղադրվել է մշակույթի տան պատուհանները և ցանկապատվել է տարածքը:

2. Ընթացքի մեջ գտնվող ծրագրեր

Շինարարության փուլում են Սարակապ բնակավայր տանող ճանապարհի 1500 գծ. մետր հատվածի և Հայկաձոր բնակավայր տանող ճանապարհի 1500 գծ. մետր հատվածի ասֆալտապատման աշխատանքները:

Հրատապ լուծում պահանջող պետական ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ է Լուսաղբյուր բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման ներքին ցանցը: Սարակապ բնակավայրին ջրամատակարարում ապահովելու համար անցկացվել է 3,5 կմ երկարության նոր ջրատար և տրվել է միացում օրական կարգավորմաՆ ջրամբարներին: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 52 մլն 716 հազար ՀՀ դրամ:

2025 թվականին պետական ծրագրի շրջանակներում Անի համայնքի Շիրակավան և Ջրափի բնակավայրերում նախատեսվում է կառուցել 288 աշակերտ/տեղ նախագծային հզորության հանրակրթական նոր դպրոցներ, իսկ Սառնաղբյուր բնակավայրերում՝ 578 աշակերտ/տեղ հզորության նոր դպրոց: 150 տեղ հզորության մանկապարտեզ է նախատեսված կառուցել Մարալիկ քաղաքում և 50 տեղ հզորության մանկապարտեզ՝ Քարաբերդ բնակավայրում: Նախատեսված է հիմնանորոգել Բագրավան բնակավայրի հանրակրթական դպրոցը:

3. Սոցիալական ոլորտ

ՄԱԿ-ի փախստականների գրասենյակի և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում Անի համայնքի հաշմանդամ երեխա ունեցող թվով 54 ընտանիքների հատկացվել է ամառային վերնաշապիկներ:

«Դիակոնիա» ԲԿ-ի հետ համագործակցության արդյունքում Անի համայնքի սոցիալապես անապահով 600 ընտանիքի հատկացվել է սննդի փաթեթներ և ձմեռային հագուստ ու կոշիկներ:

Անի համայնքի միջոցների հաշվին 240 բնակչի տրամադրվել է միանվագ դրամական օգնություն:

4. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն

Կատարվել են սելավատարերի մաքրման և պահպանման աշխատանքներ: Կազմվել է Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:

5. Գյուղատնտեսություն

Անասնաբուծության բնագավառում կառավարության հետ համատեղ կատարվել է խոշոր եղջերավոր կենդանիների մթերատվության բարձրացման ծրագիր, արհեստական

սերմնավորման ծախսեր փոխհատուցման միջոցով: Անասանաբուծությամբ զբաղվողների թվի աճը կազմել է 1 տոկոս:

ՀՀ կառավարության կողմից հաստատված «Բուսաբուծության աջակցության ծրագիր» ծրագրի շրջանակներում տրամադրվել է գարնանացան գարու և կերային կուլտուրաների հավաստագրված սերմերով ցանկի ծախսերի փոխհատուցում 70000 ՀՀ դրամ 1 հա-ի հաշվով:

Սարքին վիճակի է բերվել Անի համայնքի տարածքում տեղադրված բոլոր՝ թվով 50 հակակարկտային կայանքները: Կարկտահարությունից պաշտպանվել է մոտ 3200 հա ցանքատարածություն:

6. Շրջակա միջավայրի պաշտպանություն

2024 թվականին Անի համայնքի տարածքում տնկվել է շուրջ 6000 ծառ և թուփ: Սանիտարական և երտասարդացնող էտի է ենթարկվել մոտ 350 ծառ:

Աղբամանների թիվը ավելացել է 230–ով: Հողի շերտով ծածկվել և փակվել է 3 աղբավայր: Մասնակի ցանկապատվել է 1 աղբավայր:

6. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն:

Համայնքի տարածքում տեղադրվել է 156 նոր հնասյուն լուսատուներով, արտաքին լուսավորության բարելավման նպատակով: Արդի լեդ լուսարձակներով են փոխարինվել 1000-ից ավել արտաքին լուսավորության կետեր:

Մարալիկ քաղաքի Ազատության հրապարակը, Արկադի Տեր-Թադևոսյանի թողոցը և երտասարդական փողոցը ամբողջապես կահավորվել են ճանապարհային երթևեկության նոր նշաններով: Ընթացիկ նորոգվել է (փոսալցվել) 1785 քառ.մ ճանապարներ Մարալիկ քաղաքում, Սառնաղբյուր, Ձորակապ և Լուսաղբյուր բնակավայրերում:

<<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպության և համայնքի համաֆինանսավորման արդյունքում «Վերականգնող էներգիայի և էներգոադյունավետության խթանում Շիրակի մարզի համայնքներում» միջոցառման շրջանակում 2024 թվականին Անի համայնքի Լանջիկ բնակավայրի համայնքային կենտրոնի, <<Սառնաղբյուրի մանկապարտեզ>> և Մարալիկ քաղաքի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ների շենքի տանիքներին տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ, որոնց ընդհանուր արժեքը կազմել 9,365,000 ՀՀ դրամ:

7. Կրթություն

Արտադպրոցական դաստիարակության խմբակներ հաճախող երեղաներ թիվը ավելացել է շուրջ 80-ով: Նախադպրոցական ուսումնական հաստատություններից բավարարվածությունը կազմել է 60 տոկոս:

8. Մշակույթ և երիտասարդության հարցեր:

Գրադարաններից օգտվողներ թիվը ավելացել է 445 ընթերցողով: Համայնքի ղեկավարին կից ձևավորվել է կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմին: Բացվել է 2 երիտասարդական կենտրոն:

9. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Համայնքի սպորտային հաստատություններ հաճախում է ավելի քան 420 սան, որոնց թիվը 2023 թվականի նկատմամբ աճել է 30 տոկոսով:

10. Զբոսաշրջություն

Անիի համայնքապետարանի և զբոսաշրջային ոլորտի հայաստանյան ներկայացուցիչներ հետ համագործակցության արդյունքում Անի համայնքի մի շարք տեսարժան վայրեր ընդգրկվել են ներգնա տուրիզմի ուղղություններում:

Ընդհանուր առմամբ համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից աճել է մի քանի անգամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ